կարօտութիւն չունի։ Այլ Լատինք գրեցին առ Դեսպանն Գաղղիոյ տհաճութեամբ յետս պահանջել իւրեանց մոռանելոյ 'ի Ս. Աստուածածին առանց յատուկ բանալւոյ. 'ի հարկէ և Աֆիֆ Պէյն հարկադրեցաւ գրել։ Եւ երից ազգաց Պատրիարքաց լուր եւ Փաշային զվերստին գրելն. զի նախ կամէր կրկին անգամ ժողով կազմել և 'ի չհնազանդիլ Լատինաց, գրեցաւ 'ի կողմանէ Փաշային և Աֆիֆ Պէյին 'ի Դուռն Արքունի։

Մինչեւ ցայս վայր առանց գործադրութեան մնայ գործն, եթէ չերկարեսցին վէճքն, մինչեւ ըստ կամաց Լատինաց և Յունաց կատարեսցին խնդիրք թէ 'ի Ս. Յարութիւն, թէ 'ի Ս. Աստուածածին, թէ 'ի Ս. Ծնունդ, և թէ 'ի Ս. Համբարձումն, եթէ ոչ կրկնեսցի հրաման Արքունի, եւ կամ 'ի Գաղղիոյ Դեսպանատան չսատեսցին Լատինք, որք մինչեւ անգամ առաջարկեցին 'ի ժողովի անդ, զի իւրաքանչիւր ազգ 'ի մէն մի աւուր պատարագեսցեն կարգաւ։ Եթէ Լատինն յետս կասեսցի խնդրելոյ բանալի, թէպէտ Յոյնն ոչ բանալի կամի տալ և ոչ զառաջնութիւն, և ոչ իսկ 'ի կարգի մնանել 'ի մէն մի աւուր կարգաւ պատարագելոյ։

Ի Դուռն Փաշային նոր հրաման մի ընթերցաւ, որով հրաման տայր Լատինաց չինել տեղի մի առ ընթեր եկեղեցւոյ Ս. Աստուածածնի առ 'ի պահել անդ զկահս և ըզկարասիս սպասու իւրեանց, Յոյն Պատրիարքն չունէր ըզնմանէ ծանօթութիւն, և յայնմ աւուր լուեալ հոգոյ եհան։ Զայս ամենայն Յովհաննէս Պատրիարք գրէ 'ի Կոստանդինուպոլիս առ Գլխաւորս ազգին, և 'ի վերջոյ յաւելու. ահա մինչեւ ցասա եթէ յայանի առենիւ տեղեկացեալն մեր և եթէ 'ի լրոյ լուեալն ծանուցաք 'ի տեղեկութիւն, և մնամք սպասեալ վերստին հրամանաց և ազդարարութեանց 'ի կողմանէ Բ. Դրան։ Բայց եւ այնպէս ոչ տեղւոյս կեղեքիչք դադարին յերթեւեկելոյ առ ամենայն ազգս Քրիստոնեայս, և ոչ Յոյնն և Լատինն հանդարտ կան 'ի ձեռս բերելոյ զխնդրելիս իւրեանց, քանզի Յոյնն արտաքոյ հրամանի Տէրութեան կամի կանգնել յատուկ սեղան մի 'ի մէջ Գեթսեմանի 'ի վերայ ոտնատեղւոյն Քրիստոսի 'ի Համբարձման լերին։ Ապա պատուիրէ Փոխանորդին